

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գրականության ինստիտուտի Հին գրականության սեկտորը գոյություն ունի Հայկական ՎՊՈ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրից՝ 1943 թ.:

Սեկտորի աշխատանքը պատերազմի ժամանակ նշանավորվել է խոշորագույն հայազետ Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին և երկրորդ հատորների հրատարակությամբ 1944 և 1946 թթ.: Հետագայում, 1948 թ. հրատարակվել է նույնի առաջին հատորը ռուսերեն:

Այդ տարիներին աշխատանք է կատարվել նաև Մատենադարանում հայ միջնադարյան չափածո և առավելագույն արձակ ստեղծագործությունների հավաքման և Նղիշեի «Պատմության» բնագրի պատրաստման ուղղությամբ:

Սակայն, սեկտորի գիտական և հրատարակչական աշխատանքը առանձնապես աշխուժացել է թափ է ստացել միայն վերջին 3—4 տարիների ընթացքում:

1956 թվականին լույս տեսավ միջնադարյան հայ առակների ժողովածու՝ ռուսերեն լեզվով, ակադեմիկոս Հ. Օրբելու թարգմանությամբ, առաջարկով և ծանոթագրություններով Առակների ընտրությունը ժողովածուում կատարված է մեծ հմտությամբ ու ճաշակով: Չկաշեկով բնագրի փաստական մանրամասնություններին, բայց և Հեռանալով նրա ոգուց, ակադեմիկոս Հ. Օրբելին փայլուն ռուսերենով տալիս է հայկական միջնադարյան առակների հարազատ պատկերը, ուր հստակորեն դրսևորվում են նրանց զեղարվեստական ու ճանաչողական արժանիքները: Ժողովածուն ընդգրկում է 142 առակ:

Հաջորդ, 1957 թվականին լույս տեսան «Էջեր հայ միջնադարյան ղեղարվեստական արձակից» ժողովածուն (կազմել են Ա. Սրապյանը, Մ. Ավդալբեկյանը, Մ. Մկրտչյանը՝ Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և առաջարկով), Նղիշեի «Պատմությունը» և հանրամատչելի սերիայով՝ Մ. Մկրտչյանի «Հովնաթան սաղա» գրքույկը, ուր մանրամասն տրվում է միջնադարյան ականավոր բանաստեղծի կենսագրությունը ու հանգամանորեն վերլուծվում նրա ստեղծագործությունը:

Նղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի բնագիրը առաջարկով և ծանոթագրություններով հանդերձ՝ պատրաստել է բանասիրական գիտությունների դոկտոր Ե. Տեր-Մինասյանը: Այս գործը հմուտ բանասերի

տրնաջան աշխատանքի արդյունք է: Այստեղ Ե. Տեր-Մինասյանը շարունակում է Խորենացու, Փարպեցու և Ագաթանգեղոսի տերստերի պատրաստողների լավագույն տրագիցիաները: Ե. Տեր-Մինասյանը Նղիշեի բնագրի վրա աշխատել է՝ հենվելով նրա 5 տպագիր հրատարակությունների և 17 ձեռագրերի վրա, ըստ որում 5 տպագիրը ընտրված են մի բանի տասնյակ հրատարակություններից: Բացի այդ հաշվի են առնվել նաև 28 ճառերտիր և տոնական, ըստ որում դրանք ընտրվել են Մատենադարանում եղած 100 ճառերտիրներից և տոնականներից: Նղիշեի, Վիեննայում գտնվող ձեռագրային նյութերից Ե. Տեր-Մինասյանը օգտվել է Ֆոտոպատճենների հիման վրա: Աշխատության վերջում կցված է ականավոր պատմիչի հրատարակությունների, թարգմանությունների ու նրա մասին եղած հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով գրված հոդվածների ու հետազոտությունների բազմաթիվ բիբլիոգրաֆիա (կազմել է Հ. Անասյանը):

Առանձնապես արդյունավետ է եղել սեկտորի համար 1958 թվականը:

Այդ տարվա ընթացքում հրատարակվել են միջնադարյան երեք բանաստեղծների երգերի ժողովածուները՝ ընդարձակ առաջաբանով ու մանրամասն ծանոթագրություններով հանդերձ:

Այդ բանաստեղծներն են. Հովհաննես Երզնկացին (XIII դար), Խաչատուր Կեղառեցին (XIII—XIV դար) և Մարտիրոս Ղրիմեցին (XVII դար):

Հովհաննես Երզնկացու բանաստեղծությունների բնագիրը պատրաստել է ու նրանց մասին հետազոտություն գրել բանասիրական գիտ. թեկնածու Ա. Սրապյանը:

Սույն աշխատությունը առաջին ուսումնասիրությունն է, որը ձեռագրական նոր նյութերի հիման վրա լուծում է Հովհաննես Երզնկացու անձնավորության, կյանքի, գործունեության ու ստեղծագործության հետ կապված մի շարք հարցեր: Ամենից առաջ ցույց է տրվում, որ գոյություն են ունեցել երկու տարբեր մատենագիրներ՝ Պլուզ և Մործորեցի մականուններով, որոնք նույնացվել են հետագա դարերում՝ համանունության պատճառով: Որոշվում է Պլուզ Հովհաննես Երզնկացու ապրած ժամանակաշրջանը, կյանքն ու գործունեությունը, ճշտվում է նրան վերաբերող արձակ և չափածո ստեղծագործությունների հեղինակային պատկանելիությունը և այլն: Այս աշխատության

մեջ առաջին անգամ ի մի են բերվում Հովհաննես Սրգեկացու շափածո երկերը, տրվում են նրանց գիտականորեն պատրաստած ընագրերը:

Խաչատուր Կեչառեցու բանաստեղծությունների տեքստը պատրաստել է ու նրանց մասին հետազոտություն գրել բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավգայրեկյանը:

Ինչպես Հովհաննես Երզնկացու, այնպես էլ XIII—XIV դարերի հայ գրականության ուշագրավ ներկայացուցիչներից մեկի՝ Խաչատուր Կեչառեցու ստեղծագործությունների, կյանքի ու գործունեության մասին չի եղել որևէ ամբողջական ուսումնասիրություն: Միայն մի քանի հեղինակներ այս կամ այն առիթով անգրադարձել են նրան իրենց աշխատություններում:

Մ. Ավգայրեկյանի աշխատությունը մի ամբողջական մենագրություն է Կեչառեցու մասին: Գրքում ամփոփված են Կեչառեցու կյանքին ու գործունեությանը վերաբերող տվյալները: Հեղինակը, հենվելով փաստական նյութի վրա, բնութագրում է Կեչառեցու ստեղծագործությունը և ցույց տալիս նրա տեղը միջնադարյան հայ գրականության պատմության մեջ:

Մարտիրոս Ղրիմեցու բանաստեղծությունների բնագրերը պատրաստել ու նրանց մասին հետազոտություն է գրել բանասիրական գիտ. թեկնածու Ա. Մարտիրոսյանը:

XVII դարի հայ հասարակական գործիչ, տաղերգու-երգիծարան, գրիչ-մատենագիր Մարտիրոս Ղրիմեցին եղել է իր ժամանակի նշանավոր ու ճանաչված դեմքերից մեկը, որը մինչև այժմ մնացել է ստվերի տակ, և նրա գործունեությունը չի ենթարկվել լուրջ քննության: Նրա երկերից միայն մի քանիսն են սպազորվել այժմ արդեն հազվագյուտ դարձած հրատարակություններում, իսկ նրա հասարակական գործունեությունը միտումնավոր և շրջված է ներկայացվել կաթոլիկ պատմիչների կողմից, որոնց դեմ նա տարաբար է:

Հենվելով մատենագրական դեռևս չօգտագործված նյութերի վրա և օգտագործելով բազմաթիվ ձեռագրական աղբյուրներ, իր մենագրության մեջ Ա. Մարտիրոսյանը տալիս է Ղրիմեցու երկերի գնահատականը և նշում նրա տեղը XVII դարի հայ մատենագրության մեջ:

«Մարտիրոս Ղրիմեցի» մենագրությունը այդ դարաշրջանին նվիրված առաջին ուսումնասիրություններից մեկն է:

Նրեք այդ գրքով հիմք է դրվում «Միջնադարյան տաղասացներ» շարքին, որը 1959—1960 թվականներին հարստացվելու է ևս շուրս նոր գրքով. 1) «Հովհաննես Թլկուրանցի» (ընագրերի բաժնում զետեղվելու է շուրջ 30

բանաստեղծություն, որոնցից մի քանիսը անտիպ), պատրաստում է բանաս. գիտ. թեկնածու էմ. Պիվազյանը, 2) «Մկրտիչ Նաղաշ», պատրաստում է բանաս. գիտ. թեկնածու է. Խոնդկարյանը, 3) «Գրիգորիս Աղթամարցի», պատրաստում է Մ. Ավգայրեկյանը և 4) «Կոստանդին Երզնկացի», պատրաստում է Ա. Սրապյանը:

Բացի վերը նշածից սեկտորի գծով հրատարակվել են նաև հետևյալ գրքերը:

1. «Շամշի Մելրոն ու նրա հայերեն խոզերը», պատրաստել է պրոֆ. Լ. Մ. Մելիքսեթ-Քեկը:

Շամշի Մելրոն հայ աշուղական գրականության ականավոր դեմքերից մեկն է, Սայաթ-Նովայի կրտսեր ժամանակակիցը: Նրա խաղերի հրատարակությունը մինչև վերջերս պատահական բնույթ է կրել: Դրանք ցրված են եղել հայ պարբերականների ու առանձին ժողովածուների էջերում:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկը ի մի է հավաքել Շամշի Մելրոյի խաղերը իրենց տարբերակներով հանդերձ ու ճշտել նրանց բնագրերը:

Ժողովածուին կցված է կազմողի բանասիրական ուսումնասիրությունը, որտեղ լուծված են Շամշի Մելրոյի անձնավորության և նրա գործերին վերաբերող մի շարք հարցեր: Ժողովածուն ունի մանրամասն ծանոթագրություններ և բառարան:

2. «Արտա-Վիրապ նամակ», «Յուշտի ֆրիան»:

Այս գրքի մեջ ամփոփված են պահպանված երկու հուշարձան՝ «Արտա-Վիրապ նամակ» և «Յուշտի ֆրիան»։ Հուշարձանները պահպանված են բնագրից թարգմանել է Թեհմինա համալսարանի հին իրաներենի և պահլավերենի ամբիոնի նախկին վարիչ պրոֆ. Ռ. Աբրահամյանը, որը 1946 թ. հայրենադարձվել էր Սովետական Հայաստան:

Հին իրանական հուշարձաններից հայերեն թիչ գործեր են թարգմանված: Ներկա հրատարակությունը որոշ չափով նպաստում է այդ բույսը լրացնելուն:

«Արտա-Վիրապ նամակ» Սասանյան, Պարսկաստանի կրոնա-աշխարհիկ բնույթի այն գործերից է, որոնք իրենց մեջ են արտացոլել Մերձավոր Արևելքի ժամանակի հասարակական կյանքի, դրադաշտական կրոնի տարբեր նորմերի, ժողովրդի բարքերի ու սովորությունների առանձին կողմերը:

«Յուշտի ֆրիան» հանելուկային ժանրին պատկանող ամենավաղ գործերից է:

Այս հուշարձանների հրատարակումը հայ բնթրցողներին ու մասնագետներին հնարավորություն կտա ավելի մոտից հաղորդակից լինելու Հայաստանի դարավոր հարեան Իրանի

անցյալի կենցաղի մի շարք առանձնահատկություններին, որոնք մասամբ իրենց զուգահեռներն են ունեցել նաև հին Հայաստանում:

Գրքին կցված է խմբագիր Կ. Մելիք-Սահանյանի առաջաբանը:

Տպագրության է հանձնված «XVII—XVIII դարերի հայ աշուղների» ընդարձակ ժողովածուն, որը կազմել է Իսահ. Գրո. թեկնածու Հ. Սահակյանը:

Աշխատանքը պարունակում է XVII—XVIII դարերի հայ աշուղների այն բոլոր հայերեն երկերը, որոնք հնարավոր է եղել գտնել մեր գրադարանա-արխիվային և ձեռագրային ֆոնդերում: Ժողովածուի մեջ մտնում են 32 աշուղի երկեր:

Հրատարակվող նյութերից ցայժմ չեն տպագրվել և առաջին անգամ են հրատարակվում 15 բանաստեղծություն: Բացի այդ, նյութերի կեսից ավելին վերցված է ձեռագրային սկզբնաղբյուրներից և համեմատված տպագիր և այլ ձեռագրային օրինակների հետ, այսինքն բոլոր անհրաժեշտ դեպքերում կազմված են համեմատական տեքստեր:

Այն բանաստեղծությունների մեծ մասը, որոնք տպագրված են եղել մինչև սույն ժողովածուն, ցրված են այնպիսի պարբերականներում («Սիոն», «Շտեմարան», «Էդմա», «Բազմավեպ» և այլն) և այնպիսի ժողովածուներում, որոնք այսօր հազվագյուտ են ու անմատչելի լայն հասարակայնությանը:

Ժողովածուն ունի ներածություն-ուսումնասիրություն, ուր վերլուծված ու գնահատված են XVII—XVIII դարերի հայ աշուղների երկերը:

Ինչպես նաև ընդարձակ ծանոթագրություններ, բառարան և այլն:

Պատրաստ է նաև Մ. Աբելյանի գրական-քննադատական ու հրապարակախոսական հոդվածների սովորածավալ ժողովածուն: Մ. Աբելյանը ոչ միայն լեզվագետ էր, ֆոլկլորիստ, տաղաչափության մասնագետ ու հին գրականության պատմաբան, այլև քննադատ ու հրապարակախոս ժողովածուն պարունակում է մեծ հայագետի պարբերականներում ցրված հոդվածներն ու գրախոսականները հայ ժողովրդական բանահյուսության, հայ հին և նոր գրականություն, արևմտակերպական և արևելյան գրականություններին, գրական գպրոցների, պոետիկայի այլևայլ խնդիրների վերաբերյալ:

Սեկտորում պատրաստվում են նաև հասուկ հետազոտություններ Ներսես Շնորհալու կյանքի և ստեղծագործության, հայ-իրանական գրական կապերի մասին:

Սեկտորի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են «Տեղեկագրին» և «Պատմաբանասիրական հանդեսին», գործողվում են Մոսկվա, Լենինգրադ, Թբիլիսի, Բաքու և այլուր՝ լրացնելու իրենց գիտելիքները կամ աշխատանք կատարելու իրենց թեմաների շուրջը: 1958 թվականի ընթացքում պաշտպանվել է երեք թեկնածուական դիսերտացիա:

Ըր 7-ամյա պլանով սեկտորը նպատակ է դրել նոր նյութերի և հետազոտությունների հիման վրա պատրաստելու հայ հին և միջնադարյան գրականության ընդարձակ պատմությունը:

Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄՈՒՐ

Գնդեա 1952 թ. երկրորդին Ա. Տ. Ասլանյանը նայեմբերյանի շրջանում գիտումնասիրությունների ժամանակ պատահաբար գտել էր բարե գործիք, որը հետազոտում հրատարակվեց Ս. Սարգսյանի կողմից:

Հայտնաբերված գործիքը գտնվել էր Ղևասի-բար կոչվող հանգամանում, Գիլիկի (Կալիկի) անունը կրող բլրի վրա, որի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 730 մետրի:

Գիլիկի եղջ մասովը կազմված է վերին կավճային շրջանի կրակավերից և կրաքարերից, որոնց տակ գտնվում են թուր-սանտոնյան հասակի հրաբխային ապարներ: Հայտնաբերված իրն իրենից ներկայացնում է կանաչավուն հաս-

պիտից (пашма) պատրաստված սրածայր, գործիք (остроконечник), 8 սմ երկարությամբ և հիմքում՝ 4,5 սմ լայնությամբ:

Գործիքի աշ մասը (սայրը) սուր է, իսկ ձախը՝ բութ:

Պանդուիթյան գործիքի այս գյուտը մեզ գրեթե նաև գիտել Գիլիկի շուրջը գտնվող բարձրությունները:

Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գիլիկից 500 մ հեռավորության վրա գտնվող Ղևասի-բար կոչվող բարձրությունը համանուն բարայրով:

Բարայրը բնական է և կավճային հասակի ծագում ունի: Նրա երկարությունը կազմում է

¹ С. Сардарян, Палеозит в Армении, Ереван, 1954.

¹ Նույն տեղում, էջ 109—114, տախտակ XXX, նկ. 2ա: